ԴԱՍՏ. — Լաւոր մէկ հատիկ ձաբը գիտեմ ուրն է. պէտք է որ խանութպանին ալ աժան նստի իրեն ապրանքը. իսկ ասիկայ ուրիշ կերպով չկրնար ըլլալ, բայց եթէ ինքը կօշկակարէն աժան աժան գնէ կօշիկները, կօշկակարն ալ աժան գնած ըլլայ կաշին ևն։

ԱՀ. — Ուրեմն խօսքը հոս կուգայ թէ ապրանքները աժընցընելու և անով հասարակաց հարստութիւնը աւելցընելու համար մէկ հատիկ հնարքը աս է որ սկզբնական նիւթերուն կամ բերքերուն գինը աժընցնայ։ Բայց աս բանիս ալ հնարքը արդեօք ինչ է։

ԴԱՍՏ. — Հիմակու հիմա այսչափը բաւական է. ատ հարցմունքիդ պատասխանն ալ ուրիշ անգամ կուտամ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լէքպէր շահ։

Հիմայուն շահը 1556ին մեռնելով, իր անհաստատ աթոռը Լէքպէր որդւոյն թողուց, որ տասնըչորս տարին նոր մտեր էր, և իր հօրը Հիմայունին հրամանովը Պէյրամ խանը տերութեան խնամատար ընտրուեցաւ։ Պէյրամ՝ որ ազգաւ թիւրքմէն էր, հըմուտ ու քաջ մարդ ըլլալուն՝ տերութիւնը թշնամիներուն ձեռքէն ազատեց, ու ան նոր թագաւորին իշխանութիւնը հաստատեց։ Բայց որովհետև անգութ, ոխակալ և հպարտ ալ էր բնութեամբ, Լէքպէր շահը թագաւորութենէ հասածին պէս, Պէյրամը իշխանութենէն ձգեց։ Պէյրամ խանը աս տեսնելով՝ ապստամբեցաւ. բայց երբոր իրեն կողմի եղողները զինքը թողուցին, ու յաղթուեցաւ, սկսաւ թողութիւն խնդրել թագաւորէն։ Լէքպէր սիրով ընդունեցաւ զինքը, և նորէն էմիր էլ-էմրա ՝ իշխանաց իշխան անուանեց զանիկայ։

Լէքպէր (որ թագաւորելէն ետքը Ալէքսանտրին ալ ըսուեցաւ) երբեմն անձամբ, երբեմն ալ իր զօրապետներուն ձեռքովը առաւ Կրան, Միւճրաթը, Վինտը, և գրեթէ բոլոր Հնդկաստանին տիրեց, և Էնկլթիմուրի ցեղին թագաւորութիւնը գրեթէ նորէն հաստատեց։ Իրեն խելացի կառավարութեամբն ու առատաձեռնութեամբը՝ իր տերութեան ամէն գաւառները ծաղկեցուց, ու բոլորն ալ մէկ տեսակ կառավարութեան վերածեց. որով մեծ անուն ունեցաւ արևելքի ամէն կողմերը։ Բայց իր կենացը վերջի օրերը դժբաղդութիւններ ալ ունեցաւ. ան իր երկու սիրելի որդիքը կորսունցընելէն ետքը՝ Սպիւլֆազըլ անունով երևելի խորհրդականն ալ աւազակներէ սպաննուեցաւ։ Այս դժբաղդութիւնները ետևէ ետև վրան հասնելով, իր սիրտը շատ վշտացուցին. քանի գնաց տկարացաւ, ու 1605ին հոկտեմբերի 13ին մեռաւ՝ գրեթէ յիսուն տարի թագաւորելէն ետքը։

Պատմիչները կ'ըսեն թէ Լէքպէր շահին թագաւորութեան օրերը Մողոլի տերութեան ոսկի դարը կրնայ սեպուիլ։ Զարմանալին աս է որ ինքը ամենևին գիտութիւն և ուսում չուներ, և ինչուան իր անունն ալ կարդալ չէր գիտեր կ'ըսեն. և սակայն խիստ կը սիրէ եղեր իմաստուն մարդիկ չորս դին ժողվել ու անոնց վիճաբանութիւնները մտիկ ընել. նմանապէս գիտունև ուսումնական մարդկանց ալ աղէկ վարձատրութիւն կ'ընէր. ուստի իր ատենը շատ ծաղկեր էին Հնդկաստանի մէջ գիտութիւններն ու արհեստները։ Իր պատմութիւնը գրողներուն առջինը վերը յիշուած Սպիւլֆազըլ իշխանն եղած է. ասիկայ կ'ըսէ թէ Լէքպէր շահը իր կառավարութեանը հիմն դրած էր աս սկզբունքները. ամենուն սիրտը վաստակիլ. ամէն բանի մէջ արդարութենէ կանոնովը շարժիլ. գործողութիւնները շուտ լմընցընել. ամէն մարդ

Լ՝Աղէր շահ։

ինչ հաւատքի տեր ալ ըլլայ՝ ազատ թողուլ. ինչուան տուրքերն ալ անուշութեամբ ժողվել, և յանցաւորներուն որչափ որ կարելի է ներել։ Ի՝տալացի քարոզչին մէկը, որ երկար ատեն տեսնուած է Լ՝ՀՔպէր շահին հետ, աս գեղեցիկ գովեստն ալ կուտայ անոր, որ մեծերուն հետ մեծ՝ պզտիկներուն հետ պզտիկ էր կ՝ըսէ։ Խելքին բարակութիւնը վառվռուն աչուքներէն ալ կ՝իմացուէր. բնութիւն մաղձոտ ու բարկասիրտ կ՝երևնար, բայց կամ կրթութեամբ և կամ մասնաւոր յատկութեամբ մը այնչափ քաղցրաբարոյ էր՝ որ ամենուն սիրելի եղած էր։ Ամբը մէկ անգամ մը միայն կերակուր կ՝ուտէր, ան ալ քիչ մը բան, և ամիսներով միս չէր ուտէր։ Ի՝ր հպատակներուն ամենուն ալ հրաման տուած էր՝ որ համարձակ գան իրենց պիտոյքը յայտնեն իրեն. անկէ զատ՝ ամէն օր մէկ պատուհանի մը մէջ կեցած՝ ուրիշներուն բերած աղերսագիրները կ՝ընդունէր։